

ՀՀ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԻՆՂԵՔՍԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ ԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՌԻՍԿԵՐԻ ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ

Պետության սոցիալ-տնտեսական և հարկային ոլորտի քաղաքականության արդյունավետության կարևորագույն պայման է ազատ շուկայական տնտեսության համակարգի հաստատումը, որում գործում են հարկման միասնական սկզբունքներ ու արդարացի կառուցակարգեր, օրենսդրական մակարդակով հստակ կարգավորված են հարկային քաղաքականության մասնակիցների իրավունքներն ու պարտականությունները՝ միջազգային առաջադեմ փորձին համապատասխան: Այս հարցում առանձնակի կարևորություն ունի գործարարների շահերի պաշտպանության լիարժեք ապահովումը: Ընդ որում, անհրաժեշտ է ապահովել հարկային քաղաքականության ոլորտում հավասար մոտեցումների ներդրումը, գործարարության խթանման արդարացի պայմանների ապահովումը՝ նպատակ ունենալով երաշխավորել տնտեսության բոլոր ճյուղերի երկարաժամկետ և հավասարակշռված զարգացումը:

Նշված հարցերում հաջողություն արձանագրելու համար կարևորագույն նշանակություն ունի ճիշտ ու միասնական սկզբունքների վրա հիմնված հարկային քաղաքականության վարումը: Այս առումով ընդունելի չէ Հայաստանի Հանրապետությունում ներկայումս առկա վիճակը, երբ հարկային իրավահարաբերություններ կարգավորող նորմերը զետեղված են տարաբնույթ իրավական ակտերում և դրանով պայմանավորված հարկ վճարողների իրավունքների պաշտպանության առումով չունեն անհրաժեշտ համակարգվածություն: Բացի այդ, հարկային գործող օրենսդրության ուսումնասիրությունը վկայում է, որ դրանում կատարված փոփոխությունները հաճախ կրել են իրավիճակային բնույթ կամ նպատակ են հետապնդել լուծել որոշակի դրվագային խնդիրներ՝ կտրված լինելով հարկային միասնական համակարգի զարգացման տրամաբանությունից: Հարկային հարաբերությունների կարգավորման ոլորտում իրավական քաղաքականության միասնականության առկա վիճակն իր հերթին վտանգում է հարկ վճարողների իրավունքների, գործարարների շահերի պաշտպանության կառուցակարգերը, դրանք իրականից վերածում անիրականի: Այս իրավիճակը վտանգավոր է նաև այն առումով, որ անիրական կամ զգալիորեն քիչ արդյունավետ է դարձնում գործարարության ոլորտում իրավական պաշտպանության հնարավորությունները: Խոսքը վերաբերում է իրավունքների պաշտպանության ինչպես վարչական, այնպես էլ դատական եղանակներին:

Հարկային վարչարարության հիմնախնդիրները և դրանց լուծման ուղիները տարբեր երկրներում իրականացվում են հարկային կոնկրետ գործիքակազմի կիրառման միջոցով, որը պայմանավորված է տվյալ երկրի տնտեսության իրավիճակը բնութագրող մի շարք մակրոտնտեսական ցուցանիշներից: Որպես հարկային վարչարարության բարելավման միջոց նպատակահարմար ենք գտնում վերլուծել «Հերթիժ» հիմնադրամի գնահատականների արդյունքները 2000-2016թթ. համար՝ նպատակ ունենալով բացահայտել, թե հատկապես հարկային վարչարարությունը և կոռուպցիոն ռիսկերն ինչպես են ազդում ՀՀ տնտեսական ազատության ինդեքսի վրա: Որպես հարկային վարչարարության բարելավման մոտեցում կարելի է դիտարկել «հարկաբյուջետային ազատության» ինդեքսը, որը չափում է գործարարության հարկային բեռը, որը ներառում է ինչպես ուղղակի հարկերի, այսինքն՝ եկամտահարկի և շահութահարկի բեռի, այնպես էլ ՀՆԱ-ում հարկային բեռի տեսակարար կշռի ցուցանիշը¹:

Պետության կողմից վարվող տնտեսական քաղաքականության կարևորագույն տարրերից մեկը հարկաբյուջետային քաղաքականությունն է: Հարկաբյուջետային քաղաքականությունը կառավարության կողմից ձեռնարկված միջոցառումներն են՝ կապված պետական ծախսերի,

¹ https://www.cba.am/AM/panalyticalmaterialsresearches/For%20webpage_HF_2016.pdf.

հարկային քաղաքականության և պետական բյուջեի հաշվեկշռի փոփոխության հետ՝ նպատակ հետապնդելով տնտեսությունում ապահովել լրիվ զբաղվածություն և բարձր տնտեսական աճ¹:

Այդ իսկ պատճառով քննարկվենք ՀՀ տնտեսությունը բնութագրող հետևյալ մեծությունները՝ կոռուպցիայից ազատություն, ներդրումային ազատություն, հարկաբյուջետային ազատություն, գործարարության ազատություն:

Աղյուսակ 1

2000-2016 թթ. տնտեսական ազատության ինդեքսի դինամիկան²

	Կոռուպցիայից ազատություն	Հարկաբյուջետային ազատություն	Գործարարության ազատություն	Ներդրումների ազատություն
2000	30	79.3	55	50
2001	30	81.9	55	70
2002	25	88.3	55	70
2003	25	88.9	55	70
2004	25	90	55	70
2005	30	89.9	55	70
2006	31	90	77.6	70
2007	29	89.7	80.8	60
2008	29	89	81.3	70
2009	30	90	83.7	70
2010	29	89.3	83.4	75
2011	27	89.2	82.4	75
2012	26	89.3	87.8	75
2013	26	88	87.6	75
2014	26.7	86.5	83.1	70
2015	36	84.4	82.7	75
2016	37	83.8	77.5	80

Աղյուսակ 1-ից երևում է, որ «կոռուպցիայից ազատության» ինդեքսը գտնվում է ամենացածր մակարդակում և այն ավելի ակնհայտ երևում է գծապատկեր 1-ում: 2000-2016թթ. այն բարձրացել է 7 նիշով, սակայն համեմատելով այլ ինդեքսների հետ, մնում է ամենացածրը: 2000թ.-ին «կոռուպցիոն ազատության» ինդեքսը կազմել է 30, «գործարարության ազատության» ինդեքսը 55, 2012թ. այդ նույն գործոնների ինդեքսները համապատասխանաբար կազմել են՝ 26 և 87.8: Այսինքն, պետության կողմից կիրարկված քաղաքականության արդյունքում դյուրացել է գործարարությամբ զբաղվելը՝ բարձրանալով 32.8 նիշով, մինչև նույն ժամանակ «կոռուպցիայից ազատության» ինդեքսը ոչ միայն չի փոփոխվել, նույնիսկ նվազել է: «Կոռուպցիայից ազատության» ինդեքսի ամենամեծ աճը գրանցվել է 2014-2015թթ., կազմելով՝ 9.3 նիշ: Խնդիրը կայանում է մարդկային գործոնի և բնակչության բարոյահոգեբանական մտածելակերպի մեջ:

«Հարկաբյուջետային ազատության» ամենաբարձր ինդեքսը գրանցվել է 2006թ.՝ կազմելով 90: Նույն տարում «գործարարության ազատության» ինդեքսը կտրուկ բարձրացել է հասնելով 77.6-ի, այսինքն վարած հարկաբյուջետային քաղաքականությունը նպաստել է գործարարությամբ զբաղվելու դյուրինությանը, որն իր մեջ ներառում է՝ գործարարություն սկսելը, շինարարական թույլտվություն ստանալը, անվճարունակության պատճառով լուծարվելը, էլեկտրակա-նության հասանելիությունը:

«Գործարարության ազատության» ամենաբարձր ինդեքսը գրանցվել է 2012թ.՝ կազմելով 87.8, իսկ «հարկաբյուջետային ազատության» ինդեքսը էական փոփոխություն չի կրել՝ մնալով 90-ի սահմաններում: «Գործարարության ազատության» ինդեքսի բարձրացումը կապված է նոր

¹ http://media-economics.blogspot.am/2014/03/blog-post_16.html.

² <http://www.heritage.org/index/excel/DownloadRawData.xls>.

օրենքների՝ մասնավորապես «Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքի ընդունմամբ՝ «Եկամտա-հարկի մասին» և «Պարտադիր սոցիալական ապահովության վճարների մասին» ՀՀ օրենքները անվավեր ճանաչվելով¹: 2012-2016թթ. նկատվել է «գործարարության ազատության» ինդեքսի նվազում, որը խոսում է երկրի հարկային վարչարարության խստացման մասին: Միննույն ժա-մանակ պետք է նշել, որ «Գործարարության ազատություն» ինդեքսների հաշվարկման համար հիմք են ընդունվել Համաշխարհային բանկի «Գործարարությամբ զբաղվելու դյուրինությունը» զեկույցը²: Այն ներառում է 13 ցուցանիշ, որոնցից 9-ը նախորդ տարվա համեմատ մնացել են ան-փոփոխ, 3-ը՝ բարելավվել են, և մի փոքր վատացել է միայն 1-ը՝ սնանկության գործընթացի ար-դյունքում մարված պարտքերի (փոխհատուցման) չափի ցուցանիշը: Դա նշանակում է, որ «Հերի-թիջի» զեկույցում Հայաստանի գնահատականի վատացումը կապված չէ Հայաստանում գործա-րարության իրավական դաշտի վատացմամբ: Բանն այն է, որ, ըստ մեթոդաբանության, «Գործա-րարության ազատություն» ինդեքսը գնահատելիս «Հերիթիջը» առանձին երկրների ցուցա-նիշները համեմատում է այդ ցուցանիշի գծով դիտարկվող բոլոր երկրների միջինի հետ: Փաստո-րեն, «Գործարարության ազատություն» ինդեքսի գծով համաշխարհային միջինն է բարելավվել, որի պատճառով էլ Հայաստանի գնահատականը չի բարելավվել³:

Ինչ վերաբերում է «հարկաբյուջետային ազատության» ինդեքսին, ապա այն նույնպես նվազման միտում է ունեցել, քանի որ, ուսումնասիրելով ՀՆԱ-ում հարկային բեռի տեսակարար կշիռը, պետք է նկատել, որ այն աճման միտում է ունեցել: Պետք է նշել, որ 2016թ.-ի զեկույցում ընդհանուր հարկային բեռի տեսակարար կշիռը ՀՆԱ-ում նախորդ տարվա համեմատ աճել է 1.4%-ով և կազմել 23.4%, որի պատճառով էլ Հայաստանի հարկաբյուջետային ազատության գնահատականը չի բարելավվել⁴:

«Ներդրումների ազատության» ինդեքսը վերջին 10 տարիների ընթացքում էական փոփո-խության չի ենթարկվել, միայն 2016թ.-ին գրանցվել է ամենաբարձր դիրքը, որը կապված է օտարերկրյա ուղղակի ներդրումների խրախուսմամբ:

«Կոռուպցիայից ազատության» ինդեքսը 2016թ.-ին 2000թ.-ի համեմատ աճել է 7 նիշով: «Հարկաբյուջետային ազատության» ինդեքսը աճել է 4.5 նիշով: «Գործարարության ազատության» ինդեքսն աճել է՝ կազմելով 22.5 նիշ, իսկ «ներդրումների ազատության» ինդեքսը աճել է 30 նիշով:

Ինդեքսի ամենամեծ փոփոխությունը կատարվել է «ներդրումների ազատության» ինդեքսի գծով՝ հասնելով 30 նիշի: Դրան նպաստել է «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքը, որն ազատում էր այն ընկերություններին շահութահարկ վճարելուց, որոնց կանոնադրական կապիտալում 500 մլն և ավել օտարերկրյա ներդրում են կատարվել⁵:

Գծապատկեր 1-ից երևում է, որ դիտարկված չորս գործոններից «կոռուպցիայից ազատու-թյան» և «ներդրումների ազատության» ինդեքսները աճել են, իսկ «հարկաբյուջետային ազատու-թյան» և «գործարարության ազատության» ինդեքսները նվազել են: «Հարկաբյուջետային ազա-տության» և «գործարարության ազատության» ինդեքսների նվազումը և «կոռուպցիայից ազա-տության» ինդեքսի նվազումը բացատրվում է հարկային վարչարարության խստացմամբ:


¹ «Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենք: ՀՕ-246-Ն: ՀՀ ՊՏ 2010.12.30/69(803).1:

² Այս գործոնի գնահատման համար Համաշխարհային բանկի «Գործարարության դյուրինություն 2016» զեկույցից վերցրել են՝ ա) գործարարություն սկսելու համար անհրաժեշտ ընթացակարգերի, ժամանակի, ծախքի և նվազագույն կապիտալի ցուցանիշները, բ) շինարարական թույլտվություններ ստանալու համար անհրաժեշտ ընթացակարգերի, ժամանակի և ծախքի ցուցանիշները, գ) անվճարունակության պատճառով լուծարման դեպքում անհրաժեշտ ընթացակարգերի, ժամանակի և փոխհատուցման չափի ցուցանիշները, դ) էլեկտրականության հասանելիության համար անհրաժեշտ ընթացակարգերի, ժամանակի և ծախքի ցուցանիշ-ները:

³ https://www.cba.am/AM/panalyticalmaterialsresearches/For%20webpage_HF_2016.pdf.

⁴ Նույն տեղում:

⁵ «Շահութահարկի մասին» ՀՀ օրենք, հոդված 39 (փոփ. 23.05.98 ՀՕ-216, լրաց. 27.12.01 ՀՕ-286):



Գծապատկեր 1. 2000-2016թթ. ՀՀ-ում «Տնտեսական ագատության ինդեքսի» դինամիկան¹

Գծապատկեր 1-ից պարզ է դառնում, որ տնտեսական ագատության հիմնական ինդեքսներից՝ ներդրումային, հարկաբյուջետային և գործարարության ագատության ինդեքսները 2000-2016թթ. էականորեն փոխվել են, որին նպաստել են հանրապետությունում իրականացված և շարունակական ընթացք ունեցող ենթակառուցվածքային բարեփոխումները: Մասնավորապես, «հարկաբյուջետային ագատության» ինդեքսի բարելավումը դիտարկվող ժամանակահատվածում պայմանավորված է հարկային վարչարարության բարեփոխումներով, ինչպես նաև բյուջետային հարաբերությունների ոլորտում՝ ծրագրային բյուջետային ներդրումով: Պետք է ասել, որ «հարկաբյուջետային ագատության» ինդեքսի բարելավմանը զուգահեռ 2000-2016թթ. էականորեն աճել է «գործարարության ագատության» ինդեքսը, ինչը պայմանավորված է ՀՀ գործարար միջավայրը բնութագրող գործոնների բարելավմամբ, ընթացակարգերի պարզեցմամբ, ինչպես նաև հարկային քաղաքականության արդյունավետության բարձրացմամբ:

Ընդհանուր առմամբ, տնտեսության զարգացման համար գերակայություններից մեկը հանդիսանում է տնտեսական ագատության ինդեքսները բնորոշող գործոնների վերլուծությունը: Ընդ որում, վերլուծության արդյունքների ամփոփ գնահատականները ցույց են տալիս, որ քանի դեռ հանրապետությունում գոյություն ունեն գործարարության, ներդրումային, հարկաբյուջետային և կոտույցիայի ոլորտում առկա ռիսկերը, բացթողումները և թերացումները, տնտեսությունը հնարավորություն չունի զարգանալ իր ամրողչական հնարավորություններով:

¹ Տվյալները վերցված են աղյուսակ 1-ից:

ՀՀ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԻՆԴԵՔՍԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ ԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՌԻՍԿԵՐԻ ՀԱՍԱՏԵԶՍՈՒՄ

ՏԱԹԵՎԻԿ ՍՄԲԱՏԻ ՓԱՐՍԱԴԱՆՅԱՆ, տ.գ.թ.

*ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության
ինստիտուտի կրտսեր գիտաշխատող*

Համառոտագիր

ՀՀ տնտեսության զարգացման համար գերակայություններից մեկը հանդիսանում է տնտեսական ազատության ինդեքսները բնորոշող գործոնների վերլուծությունը: Միաժամանակ, վերլուծության արդյունքների ամփոփ գնահատականները ցույց են տալիս, որ քանի դեռ հանրապետությունում գոյություն ունեն գործարարության, ներդրումային, հարկաբյուջետային և կոռուպցիայի ռիսկեր, առկա ռիսկերը, թերացումները, տնտեսությունը հնարավորություն չունի զարգանալ իր ամբողջական ներուժով՝ եթե չկա տնտեսական, քաղաքական, բարոյահոգեբանական կամք և դիրքորոշում՝ ուղղված պետության, տնտեսության, բիզնեսի, հասարակության օրինաչափ զարգացմանը:

Բանալի բառեր. *հարկային գործիքակազմ, հարկաբյուջետային ազատություն, օտարերկրյա ներդրողներ, հարկային վարչարարություն:*

АНАЛИЗ ИНДЕКСА ЭКОНОМИЧЕСКОЙ СВОБОДЫ РА В КОНТЕКСТЕ КОРРУПЦИОННЫХ РИСКОВ

ТАТЕВИК СМБАТОВНА ПАРСАДАНЯН, к.э.н.

младший научный сотрудник Института экономики им. М.Котаняна НАН РА

Аннотация

Одним из приоритетов экономического развития РА является анализ факторов, характеризующих индексы экономической свободы. Одновременно, сводные оценки результатов анализа показывают, что до тех пор, пока в республике существуют инвестиционные, налогово-бюджетные, коррупционные риски и риски для ведения бизнеса, упущения, а также нет экономической, политической, морально-психологической воли и позиции, направленной на закономерное развитие государства, экономики, бизнеса и общества, не может быть полноценного развития экономического потенциала.

Ключевые слова: *налоговый инструментарий, налогово-бюджетная свобода, иностранные инвесторы, налоговое администрирование.*

ANALYSIS OF THE INDEX OF ECONOMIC FREEDOM OF ARMENIA IN THE CONTEXT OF CORRUPTION RISKS

TATEVIK SMBAT PARSADANYAN, Ph.D. in Economics

*Junior Research Associate, M. Kotanyan Institute of Economics
National Academy of Sciences, Republic of Armenia*

Abstract

One of the priorities of economic development in the Republic of Armenia is the analysis of factors characterizing the index of economic freedom. Meanwhile, an overall assessment of the results of the analysis shows that as long as the investors could bear and/or be exposed to investment, fiscal and corruption risks and those risks that are associated with the doing business and face shortcomings and inactions; and the nation lacks economics, political moral-psychological will, and position and views on the natural course of development of the nation, economy, business and society the nation couldn't report development that is aimed at taping the full-potential growth.

Keywords: *Fiscal tools, fiscal freedom, foreign investors and tax administration*